ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

2019թ. հունվար

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2019 թվականի հունվարին ցածր է նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշից

- 2019 թվականի հունվարին ՏԱՑ-ը կազմել է 106.0%:
- Ընդհանուր առմամբ հունվար ամիսը բնութագրական չէ մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկայի առումով, քանի որ հունվար ամսին բոլոր հիմնական ճյուղերի գծով արտադրության ծավալները կազմում են տարեկան ցուցանիշի ոչ ավել քան 6-7% (արդյունաբերություն) և կամ ավելի ցածր (շինարարություն՝ 1.8-2.0%):
- Արդյունաբերության թողարկումը նվազել է 0.6%-ով: 2018թ. հունվարին գրանցվել էր 13.9% աճ: Բացասական նպաստում են ունեցել հանքագործական արդյունաբերությունը՝ -2.2 տոկոսային կետ և Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում ենթաճյուղը՝ -1.4 տոկոսային կետ և Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակումը՝ -0.1 տոկոսային կետ: Ի հակադրություն վերոշյալի մշակող արդյունաբերության դրական նպաստումը կազմել է 3.2 տոկոսային կետ:
- Շինարարության աճը կազմել է 22.1%՝ նախորդ տարվա 19.7%-ի դիմաց: Ըստ ֆինանսավորման աղբյուրների 2018թ. հունվարի նկատմամբ 4.8 անգամ աճել է պետական բյուջեի միջոցներով իրականացվող շինարարությունը, այդ թվում՝ միջազգային վարկերի հաշվին շինարարության ծավալն աճել է 12.0 անգամ: Բնակչության միջոցների հաշվին՝ աճը 7.9%: Շինարարության ծավալի -44.4% նվազում է գրանցվել համայնքների միջոցների և -18.3% կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված շինարարության գծով:
- Ծառայությունների ոլորտում արձանագրվել է 15.6% աճ: Ինչպես և նախորդ տարի ծառայությունների աճին առավելագույն՝ 9.1 տոկոսային կետով նպաստել է մշակույթ, զվարճություններ և հանգիստ տեսակը, որին ըստ նպաստման նվազման հաջորդում են ֆինանսական և ապահովագրական գործունեու-









թյունը՝ 4.0 տոկոսային կետ, կացության և հանրային սննդի կազմակերպումը՝ 1.6, վարչարարական և օժանդակ գործունեությունը՝ 0.7, տեղեկատվություն և կապը՝ 0.6 տոկոսային կետ: Դրական նպաստում գրանցած մյուս տեսակների գումարային նպաստումը կազմել է 1.1 տոկոսային կետ: Բացասական նպաստում են ունեցել անշարժ գույքի հետ կապված գործունեության և տրանսպորտ ծառայության տեսակները:

- Առևտրի շրջանառության աճը կազմել է 19.3%: Մանրածախ առևտրի շրջանառության աճը կազմել է 10.3%, մեծածախ առևտրինը՝ 31.4%, իսկ ավտոմեքենաների առևտրինը՝ 11.3%:

  Ըստ առևտրի օբյեկտների տեսակարար կշռի նվազմամբ մանրածախ առևտրի աճ է գանցվել խանութների գծով՝ 10.7%, առևտրի այլ օբյեկտների՝ 15.4%, կրպակների՝ 14.1%: Նվազում է գրանցվել սպառողական ապրանքների շուկաների գծով՝ -10.9% և գյուղատնտեսական արտադրանքի շուկաներիգծով՝ -37.4%:

Ծառայությունների տեսակները	Աճ, %	Կառուցվածք %	Նպաստ %-ային կետ
Ընդամենը	15.6	100.0	-
մշակույթ, զվարճություններ և հանգիստ	44.1	25.9	9.1
ֆինանսական և ապահովագրական գործունեություն	16.3	24.7	4.0
կացության և հանրային սննդի կազմակերպում	28.9	6.4	1.6
վարչարարական և օժանդակ գործունեություն	17.7	3.9	0.7
տեղեկատվություն և կապ	3.8	15.0	0.6
կրթություն	14.1	3.1	0.5
առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	8.4	4.2	0.4
մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	6.2	3.0	0.2
սպասարկման այլ ծառայություններ	0.9	1.4	0.0
անշարժ գույքի հետ կապված գործունեություն	-6.0	3.3	-0.2
տրանսպորտ	-10.7	9.1	-1.3

Առևտրի շրջանառության ծավալներ, 2016-2019թթ., մլրդ դրամ



Գնաճի ցուցանիշը ցածր է նախորդ տարվա ցուցանիշից

- 2019 թվականի հունվարին սպառողական գների ինդեքսը կազմել է 100.6%, նախորդ տարվա 102.9%-ի դիմաց:

  Ըստ առանձին ապրանքների և ծառայությունների առավելագույն գնաճ գրանցվել է ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակների գծով՝ կազմելով 103.9%, առողջապահություն՝ 103.0%, ռեստորաններ և հյուրանոցներ՝ 102.9%,հագուստ և կոշիկ՝ 102.4%:

  Գների նվազում է գրանցվել ծառայությունների հետևյալ տեսակներում՝ տրանսպորտ՝ ինդեքսը 99.9%, կապ՝ 99.4%, հանգիստ և մշակույթ՝ 96.2%:

- Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը կազմել է 97.4%, նախորդ տարվա 105.2%-ի դիմաց:

  Ենթաճյուղերից մշակող արդյունաբերությունում գների ինդեքսը կազմել է 102.0%, հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում՝ 87.6%, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում՝ 91.2%, ջրամատա-կարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում՝ 100.9%:

Սպառողական գների ինդեքս, 2016-2019թթ., հունվար, %



Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս 2016-2019թթ., հունվար, %



2018 թվականի աճի դիմաց 2019 թվականի հունվարին արտաքին առևտրաշրջանառության, այդ թվում և արտահանման և ներմուծման գծով գրանցվել է բացասական ցուցանիշ

- Արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է 462.7 մլն ԱՄՆ դոլար՝ նվազումը -7.6%:
- Արտահանումը կազմել է 145.4 մլն ԱՄՆ դոլար, նվազումը՝ 15.8%:
- Ըստ երկրների խմբերի արտահանման նվազում է գրանցվել բոլոր երեք ուղղություններով: Դեպի ԵՄ երկրներ արտահանումը նվազել է՝ -23.8%-ով, ԱՊՀ երկրներ՝ -9.7%-ով, այլ երկրներ խումբ՝ -14.1%-ով: ԵԱՏՄ երկրներ արտահանումը նվազել է՝ -10.5%-ով:
- Ըստ ՏԳՏ արտահանման 2-նիշ դասակարգման 20 ապրանքախմբերից աճ է գրանցվել միայն 6-ի գծով՝ (գումարային տեսակարար կշիռը 32.8%), նպաստումը՝ 13.2 տոկոսային կետ: Ըստ արտահանման մեջ տեսակարար կշռի նվազման արտահանման առավել բարձր աճ է գրանցվել հետևյալ ապրանքախմբերի գծով՝ պատրաստի սննդի արտադրանք (ներառյալ ծխախոտ)՝ 9.4%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ՝ 2.7 անգամ, տարբեր արդյունաբերական ապրանքներ՝ 3.2 անգամ, բուսական ծագման արտադրանք՝ 19.2%, իրեր քարից, գիպսից ցեմենտից՝ 33.2%:
- Ներմուծումը կազմել է 297.7 մլն ԱՄՆ դոլար, նվազումը՝ -9.3%:
- Ըստ երկրների խմբերի նույնպես բոլոր երեք ուղղություններով նվազում է գրանցվել: ԵՄ երկրներից ներմուծումը նվազել է՝ -11.1%-ով, ԱՊՀ երկրներից՝ -9.6%-ով, այլ երկրներ խմբից՝ -8.3%-ով: ԵԱՏՄ երկրներ արտահանումը նվազել է՝ -8.4%-ով:

Արտահանման ծավալի աճ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, հունվար, %



Column1	Արտահանման նվազում, %
սարքեր և ապարատներ	-59.5
կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	-52.4
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	-48.4
կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	-42.2
կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	-41.3
մանածագործական իրեր	-40.4
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	-34.1
փայտ և փայտյա իրեր	-29.5
թուղթ և թղթից իրեր	-26.5
պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	-23.6
հանքահումքային արտադրանք	-20.2
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	-12.9
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	-5.2

Ներմուծման ծավալի աճ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, հունվար, %



- Ըստ ՏԳՏ ներմուծման 2-նիշ դասակարգման 20 ապրանքախմբերից աճ է գրանցվել 9 ապրանքախմբում:

  Ներմուծման առավել ըստ տեսակարար կշռի նվազման ապրանքախմբերից աճ է գրանցվել հետևյալների գծով՝ հանքահումքային արտադրանք՝ 9.4%, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ՝ 8.9%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ՝ 8.8%, մանածագործական իրեր՝ 1.3%, թուղթ և թղթից իրեր՝ 15.1%, տարբեր արդյունաբերական ապրանքներ՝ 1.8%, կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ 22.3%, փայտ և փայտյա իրեր՝ 23.3% և կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ 13.5%:

	Ներմուծման նվազում, %
պատրաստի սննդի արտադրանք	-46.8
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	-33.8
կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	-25.4
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	-22.1
բուսական ծագման արտադրանք	-17.9
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	-14.0
պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	-7.6
կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	-3.2

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

2018թ. հունվարին արդյունաբերական արտադրանքի ծավալը նվազել է 0.6%-ով: Հիմնական ճյուղերից աճ է գրանցվել միայն մշակող արդյունաբերությունում:

- Հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ճյուղում թողարկումը նվազել է 9.8%-ով, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում ճյուղում՝ 4.3%-ով, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում ճյուղում՝ -6.7%-ով, իսկ մշակող արդյունաբերությունում գրանցվել է 5.9% աճ:
- Մշակող արդյունաբերության ենթաճյուղերից արդյունաբերության աճին (ըստ տեսակարար կշռի նվազման) առավել մեծ դրական նպաստ են ունեցել՝ սննդամթերքի արտադրության՝ 15.0%, ծխախոտային արտադրատեսակների արտադրության՝ 19.6%, խմիչքների արտադրության՝ 47.5% աճերը (գումարային նպաստումը արդյունաբերությանը 6.2 տոկոսային կետ): Աճ գրանցած ենթաճյուղերի գումարային նպաստումն արդյունաբերության աճին կազմել է 7.6 տոկոսային կետ
- Ըստ ՏԳԴ 2-նիշ դասակարգման մշակող արդյունաբերության 23 ենթաճյուղերից 8-ում գրանցվել է նվազում՝ (արդյունաբերության աճի գումարային զսպումը՝ -4.4 տոկոսային կետ):

Արդյունաբերության արտահանում նվազել է: Նվազում է գրանցվել թե հանքագործական արդյունաբերության և թե մշակող արդյունաբերության գծով: Մշակող արդյունաբերության որոշ ճյուղերի գծով գրանցվել է արտահանման աճ:

- Արդյունաբերական արտադրանքի արտահանում ընթացիկ գներով նվազել է 13.1%-ով, դեպի ԱՊՀ երկրներ արտահանման աճը կազմել է 21.7%, այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներ՝ 48.9 %-ով իսկ դեպի ԱՅԼ երկրներ նվազել է 19.5%-ով:
- Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում ճյուղի արտադրանքի արտահանումը նվազել է 12.8%-ով, դեպի ԱՊՀ երկրներ (տեսակարար կշիռը՝ 0.8%) աճել է 4.1 անգամ, այդ թվում ԵԱՏՄ երկրներ՝ 5.3 անգամ, իսկ դեպի այլ երկրներ՝ նվազել է 19.5%-ով (տեսակարար կշիռը՝ 99.2%):
- Մշակող արդյունաբերության արտահանումը նվազել է 2.2%-ով: Մշակող արդյունաբերության արտահանումը դեպի ԱՊՀ երկրներ (տեսակարար կշիռը՝ 35.5%) աճել է 20.5%-ով, այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներ՝ 47.5%, իսկ դեպի ԱՅԼ երկրներ՝ նվազել 11.4%-ով:

Մշակող արդյունաբերության ճյուղերի թողարկման աճ, 2019թ. հունվարին, %



Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող 5 ենթաճյուղերից (գումարային տեսակարար կշիռը՝ 92.6%) աճ է գրանցվել խմիչքների արտահանման գծով՝ 57.6% և սննդամթերքի (ներառյալ ծխախոտ) գծով՝ 69.6%: Արտահանման նվազում է գրանցվել հիմնային մետաղների և ծխախոտե արտադրատեսակների արտահանման գծով:

Մշակող արդյունաբերության կառուցվածքում բարձր տեսակարար կշիռ ունեցող ենթաճյուղերի արտադրանքի արտահանման աճ, %

	Աճ, %	Տեսակարար կշիռ, %
Հիմնային մետաղների արտադրություն	-13.2	29.6
Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	-23.0	24.1
Արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	-9.3	10.7
Խմիչքների արտադրություն	57.6	21.2
Սննդամթերքի արտադրություն	69.6	6.9